գիպտացւոց՝ և Փողգոթայն էր 'ի ձեռս նոցա , ոմանք կարծեն թէ՝ (էր 'ի ձեռս Լատինաց , և երբեմն պատարագէին անդ), Խաչավանքն և այլ տեղիք , և ոմանք 'ի քահանայից Վրաց բնակէին 'ի Ս . Յարութիւն ։

Իսկ Արաբացի այլազգի պատմիչն ասէ , 'ի սմին ժամանակի Լատինք գերի վարեցին զարս Կ յԱղէքսանդրիայ քաղաքէ , իմացեալ զայս Մէլիք Աշրաֆայ բարկացաւ յոյժ , գրեաց հրովարտակ եւ 'ի ձեռն ուղտապանաց առաքեաց զայն յԵրուսաղէմ , ըմբռնել զԼատին կրօնաւորս , որք բնակէին 'ի Սիոն՝ 'ի Բեթղեհէմ , և 'ի Ս . Յարութիւն , և առաքել զնոսա կապանօք 'ի դուռն Սուլթանին , 'ի թուին ՋԻԵ (1476) ։

Դեսպան թագաւորին Հապեշաց եկն յԵրուսաղէմ հրովարտակաւ Մէլիք Աշրաֆայ մերձ յաւուրս տօնի Պասեքին , և էին ընդ նմա ոստիկանք եւ գանձապահն կուսակալին Դամասկոսի ։ Սուլթանն գրեալ էր , չարգելուլ զքրիստոնեայս և չխափանել զմուտս նոցա 'ի տաճարն Ս . Յարութեան ։ Իսկ այլազգիք քաղաքին միայն դեսպանին և ժողովրդոց նորին ետուն հրաման մտանել , բայց նա ոչ առ յանձն և մերժեաց զբանս նոցա , ապա յանձն արարին նմա զփականս տաճարին , և նորա բացեալ զդուռնն եմուտ ինքըն և ամենայն ազգ քրիստոնէից՝ առանց հարկի եւ ծախուց , եւ կատարեցին հանդիսիւ զտօն Ս . Զատկին , 'ի թուին՝ ՋԻԹ (1480) ։

Լատին կղերք որք բնակէին 'ի վանս Սիոնի , շինեցին արտաքոյ նորին մերձ 'ի գերեզմանատունս քրիստոնէից գմբեթ եւ 'ի ներքոյ սեղան պատարագի · տեսեալ զայն դատաւորաց և մեծամեծաց քաղաքին , ժողովեալ գնացին անդ բազմութեամբ և բազմեցան 'ի ներքոյ գմբեթին այնորիկ , և սկիզբն արարին քննութեան , քրիստոնեայք ասէին թէ՝ տեղին այն է գերեզման Բագոսի , և ուխտատեղի քրիստոնէից , որոյ վասն գիտութեամբ այլազգեաց շինեցին գմբեթ 'ի վերայ նորա , կարծելով թէ անդ թաղեալ իցէ Բագոս վկայն , զոր Արաբացիք կոչեն Շէյխ էլՄէնւէ , զորմէ գրեալ եմք յառաջագոյն ։ Իսկ 'ի քննութեան , վկայութեամբ այլազգեաց յայտնի եղեւ թէ գերեզման Բագոսի է յայլ ուրեք 'ի պարտիզի 'ի ձեռս այլազգեաց մերձ